ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ.Հ Արմավիրի մարզի Արևիկի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հ.Հ Արմավիրի մարզի Արևիկի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը (ծածկագիր (3.1-3))

1. Կատարում է աշխատակազմի ղեկավարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ կերպով,

2. Աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը,

3.Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ,

4. ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է միջնակարգ կրթություն, սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի < բ > ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

ՈՒնի համակարգչի և համակարգչային տեխնիկայի այլ միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա Արևիկի համայնքապետարանի շենքում 2016 թվականի սեպտեմբերի 12 -ին ժամը 12:00 -ին:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս) .

-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

-արական սեռի անձինք՝ զին. գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.

-մեկ լուսանկար՝ 3X4 չափի.

- անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Արևիկի համայնքապետարան և ՀՀ Արմավիրի մարզպետարան ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ Ք. Արմավիր , Աբովյան 71, հեռ).(0237) 2-07-70 , 2-76-49):

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 9.00-16.00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է ս.թ. օգոստոսի 23-ը:

Համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան